Azg
armenian daily

18 ԱՊՐԻԼ 2001 ՇԱԲԱԹ 71 (2275)

Բուշը դրսևորում է Թուրքիային օգնելու իր պատրաստակամությունը

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: ԱՄՆ ազգային անվտանգության խորհրդի արտակարգ նիստում քննարկվել են Թուրքիայի ներկայիս տնտեսական դրության եւ Անկարային ցույց տրվելիք օգնության հարցերը: Նիստին մասնակցել են ԱՄՆ պաշտպանության, արտաքին հարաբերությունների եւ ֆինանսների նախարարությունների, ինչպես նաեւ տեղեկատվական ծառայությունների պատասխանատուներ: Թուրքական «Հյուրիեթ» թերթը հաղորդում է, որ խորհրդակցության ընթացքում որեւէ արտակարգ որոշում չի ընդունվել: Սակայն, ինչպես նշում է թերթը, Վաշինգտոնի դիվանագետ դիտորդները կարծում են, որ այդ խորհրդակցության հրավիրմամբ ԱՄՆ նախագահ Ջ. Բուշը դրսեւորել է Թուրքիային օգնություն ցույց տալու իր ցանկությունը: Միեւնույն ժամանակ Բուշի կառավարության պատասխանատուները դրանից առաջ Թուրքիայի տնտեսական ճգնաժամը մեղմելու կապակցությամբ կարեւորել էին ճգնաժամի վերացման համար պատասխանատվության բարձրացման անհրաժեշտությունը:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Ղարաբաղյան հակամարտությունը վերածվել է ամբողջ տարածաշրջանի հեռանկարը պայմանավորող խնդրի»

Ճնշումների հավանականությունը քաղաքական ուժերը գրեթե բացառում են

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Վերջին բանակցություններից վերադարձին, հենց օդանավակայանում հանրապետության նախագահը հայտարարեց, թե չափավոր ճնշումներ Քի Վեսթում եղել են: Անցած ուրբաթ արտգործնախարար Վարդան Օսկանյանը պատասխանելով «Ազգ»-ի լրագրողի այն հարցին, թե հնարավո՞ր են ճնշումներ ԼՂՀ ղեկավարության վրա, պատասխանել է. «Համենայն դեպս, նախագահներ Քոչարյանը եւ Ղուկասյանը շփումների մեջ են, միշտ խորհրդակցում են իրար հետ»: Եթե նկատի առնենք, որ մինչ այդ հանրապետության նախագահը սպառված համարեց Երեւան-Բաքու բանակցությունների ռեսուրսները եւ հարցի կարգավորման առյուծի բաժինն այլեւս Մինսկի եռանախագահողներին թողեց, ապա միանգամայն տրամաբանական է դառնում, որ երկու կողմի վրա էլ ինչ-որ ճնշումներ պիտի լինեին: Նկատենք, որ ժնեւյան հանդիպումից առաջ արդեն իսկ խոսվում է որակապես նոր առաջարկի մասին, ինչը հնարավորինս օպտիմալ դարձնելու համար եռանախագահողները պիտի ճնշումների դիմեն: Սակայն ինչ աստիճանի կլինեն դրանք, որքանով կլինեն մեր դիրքորոշումների շրջանակներում՝ դեռեւս անհայտ է: Անհայտ է հիմնականում այն պատճառով, որ նախագահները բանակցությունները խիստ գաղտնի են պահում, որի շարունակումը, բնականաբար, երկար շարունակվել չի կարող:

Տես էջ 2

«ՀՈԿՏԵՄԲԵՐ 27»

«Գագիկ Ջհանգիրյանը զբաղված էր Ռ. Քոչարյանի դեմ կեղծ ցուցմունքներ կորզելով»

Ն. Հունանյանը հայտարարեց, որ այդ փաստը հաստատող նյութերը հանվել են քրեական գործից

ՍԱՌԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ

«Հոկտեմբերի 27»-ի քրեական գործը դատարանում պաշտպանող պետական մեղադրողներն ապրիլի 17-ին ավարտեցին ամբաստանյալ Նաիրի Հունանյանի նախաքննական ցուցմունքների հրապարակումը: Դատավարն ամբաստանյալին դիմելով ցանկացավ ճշտել, թե ինչ ունի ասելու հրապարակված ցուցմունքների վերաբերյալ: Ն. Հունանյանը հայտարարեց, որ որոշ ցուցմունքներ չհրապարակվեցին: ՀՀ գլխավոր դատախազության հատուկ կարեւորագույն գործերով քննիչ Զոն Բարխուդարյանը երկու անգամ հարցաքննել է իր նկատմամբ բռնություններ գործադրելու վերաբերյալ եւ այն շրջանակում, թե ինչպես են ծագել նախկին մեղադրյալների դեմ տված ցուցմունքները, որոնցից հրաժարվել է նախաքննության ավարտին: Ամբաստանյալը հայտնեց նաեւ, որ նշված ցուցմունքները քրեական գործում չկան, բացի այդ, քր. գործից բազմաթիվ նյութեր են բացակայում:

Մեղադրողներից զինդատախազության ներկայացուցիչը լրացուցիչ պարզաբանում պահանջեց ամբաստանյալից, թե ինչ ցուցմունքների մասին է խոսքը: Ն. Հունանյանը պարզաբանեց, որ 2000 թ. մայիսի 24-ին դիմում է գրել ՀՀ նախագահին եւ ՀՀ գլխավոր դատախազին խնդրելով ընդունել իրեն, որից հետո հարցաքննվել է իր նկատմամբ կիրառված խոշտանգումների վերաբերյալ, մանրամասն ցուցմունք է գրել հանրապետության երեք բարձրաստիճան պաշտոնյաների ներկայությամբ, որը հայտարարություն է ձեւակերպվել: Մեր տեղեկությամբ՝ որպես ՀՀ նախագահի ներկայացուցիչներ հարցաքննությանը մասնակցել են արդարադատության նախարար Դ. Հարությունյանը, ՀՀ գլխավոր դատախազ Բ. Նազարյանը, ԱԱ նախարար Կ. Պետրոսյանը:

Տես էջ 3



ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

Գանգատը կլսվի մարտի վերջին

Մարտի 22-ի գործով 6 դատապարտյալներից միայն 5-ն են գանգատարկել ԼՂՀ գերագույն դատարանին: Ահաբեկչական խմբի անդամներից Դավիթ Ղուլյանն այդպես էլ չի ցանկացել վճռաբեկ բողոք ներկայացնել: Ինչպես տեղեկացրին ՆԳ գրասենյակից, վերոհիշյալ գործը վճռաբեկության կարգով լսվելու է մարտի 29-ին երեք դատավոր կազմով:

Գործը վերադարձվել է լրախնության

Երեկ Ստեփանակերտի քաղաքային դատարանում վերսկսվեց անցյալ տարվա նոյեմբերին ընդհատված, Ստեփանակերտի նախկին քաղաքապետ Կարեն Բաբայանի գործով դատավարությունը: Ինչպես **«Ազգի»** թղթակցին հայտնեց քաղաքային դատարանի նախագահ, նշված գործով դատավոր Ն. Հակոբյանը, գործը վերադարձվել է նախաքննության մարմին՝ լրախնության: Ըստ դատավորի, նախկին քաղաքապետի մասով քր գործն անջատված է եղել: Իրար հետ սերտորեն կապված լինելու հանգամանքով դրան պիտի միացվի նաեւ Հովիկ Թումասյանի մասով գործը, որը նույնպես մեղադրվում է հափշտակությունների մեջ: Նախաքննությունը կտանի Ստեփանակերտի քաղաքային դատախազությունը:

«Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատվել են ջերմ եւ վստահելի հարաբերություններ»

«Մոսկվան գոհ է ռուս-ադրբեջանական հարաբերությունների զարգացման տեմպերից: Ռուսաստանի եւ Ադրբեջանի միջեւ հաստատվել են ջերմ եւ վստահելի հարաբերություններ: Երկու երկրների նախագահները պարբերաբար անց են կացնում հեռախոսային զրույցներ, որոնց ընթացքում քննարկվում են երկկողմ հարաբերությունների հրատապ հարցեր: Այսօր Մոսկվան եւ Բաքուն զբաղվում են պայմանավորվածությունների իրականացմամբ, որոնք ձեռք են բերվել նախագահ Պուտինի՝ Ադրբեջան այցելության ընթացքում», երեկ Մոսկվայում, բացելով Ադրբեջանի խորհրդարանական պատվիրակության հետ հանդիպումը, հայտարարել է ՌԴ արտգործնախարար Ի. Իվանովը:

Ադրբեջանի խորհրդարանի խոսնակ Մուրբուզ Ալեսքերովը, որը գլխավորում է խորհրդարանական պատվիրակությունը, հայտարարել է, թե ռուս-ադրբեջանական հարաբերություններում սկսվել է համագործակցության նոր շրջան, հաղորդում է ՌԻԱ «Նովոստի» գործակալությունը:

Մուրբուզ Ալեսքերովը հայտարարել է, թե մինչեւ ժնեւյան հանդիպումը Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահները կբանակցեն Մոսկվայում՝ Վլադիմիր Պուտինի միջնորդությամբ:

«Ազգը» ՀՀ նախագահի մամլո խոսնակից փորձեց ճշտել՝ ինչքանո՞վ է հավանական նման հանդիպումը: «Պուտինի միջնորդությամբ Քոչարյան-Ալիեւ հանդիպման պայմանավորվածություն չկա», ասաց Վահե Գաբրիելյանը:

Թ. Հ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ
Մեծ եղեռնի 86-ամյակին նվիրված երեկո

Բացման խոսք՝ ՀՌԱԿ ատենապետ **ՌՈՒԲԵՆ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ**

Խոսք օրհնության՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ **ՆԱՎԱՍԱՐԴ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԿՃՈՅԱՆ**

Օրվա բանախոս՝ ՌԱԿ փոխատենապետ, ԵՊՀ պատվավոր դոկտոր **ԵՐՎԱՆԴ ԱԶԱՏՅԱՆ**

Հանրային ռադիոյի Գեւորգ Աճեմյանի անվան ջութակահարների անսամբլ, գեղարվեստական ղեկավար **ԱՆԱՀԻՏ ԱՃԵՄՅԱՆ**

Նվագակցում է՝ **ԱՆՆԱ ԱՃԵՄՅԱՆԸ**

Մենակատար՝ միջազգային մրցույթների դափնեկիր **ԱՆՆԱ ՄԱՅԻԼՅԱՆ**

Ասմունքող՝ ՀՀ վաստակավոր արտիստուհի **ՎԵՐԱ ՀԱԿՈԲՅԱՆ**

Տեղի կունենա ապրիլի 18-ին, ժամը 19:00-ին, Թեթեյան կենտրոնում:

Մուտքն ազատ է:

ՏԱՐԵԴԱՐՁ

Ընդունելություն «Ազգի» 10-ամյակի առիթով

Երեկ, հետմիջօրեին Թեթեյան կենտրոնում տեղի ունեցավ մեր օրաթերթի հիմնադրման 10-ամյակին նվիրված ընդունելություն: Օրաթերթի անձնակազմի անդամներ, այլ թերթերի եւ տարբեր լրատվամիջոցների ներկայացուցիչներ, կուսակցական եւ քաղաքական գործիչներ, տարբեր նախարարությունների եւ գերատեսչությունների ներկայացուցիչներ, թերթի հիմնադիրներ եւ հեղինակներ «Կակտուս» նվագախմբի հաճելի երաժշտության ինչյուններ ներքո, ուտելիքներով ու խմիչքներով ծանրաբեռն սեղանների շուրջ շնորհավորեցին թերթի 10-ամյակը եւ երկար երթ մաղթեցին «Ազգին»:

Ավելի մանրամասն՝ հաջորդիվ:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Թե ինչ կամ կարող է ունենալ հանրահավաքը... հոկտեմբերի 27-ի հետ

«Ցույցերի, հանրահավաքների անցկացման օրինագիծը խորհրդարան-կառավարություն առճակատման պատճառ

Որեւէ ցույց կամ հանրահավաք, որ կազմակերպվել է Հայաստանում, որեւէ օրենքով ադահովագրված չի եղել: Քաղաքաթեսները կամ համայնքաթեսները թույլատրել են, հավաքները տեղի են ունեցել, չեն թույլատրել, պարզապես չեն անցկացվել:

Քննարկման դրվեց «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր եւ ցույցեր անցկացնելու կարգի մասին» օրինագիծը դրանից բխող «Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքում եւ ՀՀ քրեական օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի հետ միաժամանակ: Ընդ որում երկու օրինագծերն էլ ներկայացնում էր կառավարությունը ի դեմս արդարադատության նախարար Դավիթ Հարությունյանի, որի հիմնավորումները օրենքի վերաբերյալ խորհրդարանականները ավիններով ընդունեցին: Արտակ Սադոյանն, օրինակ, նախագիծը համարեց մարդկանց իրավունքների սահմանափակման փորձ, իսկ «Կրակոս» ելույթների սիրահար կոմունիստ Նորիկ Պետրոսյանը, չգիտես ինչպես առանցքներ գտնելով, հարցը կապեց հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետ, թե իբր եթե կառավարությունը չի կարողանում իրեն պաշտպանել, ինչպե՞ս կարող է պաշտպանել, ասենք, հանրահավաքի եկած մի քանի հազարի հասնող ժողովրդին: Աժ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի նյարդերն այստեղ տեղի տվեցին, եւ նա նման խոսակցությունները պարզապես զգրախոսություն համարեց, ասելով, թե պատգամավորներից շատ շատերը չեն էլ թերթում օրինագծերը, եւ դա նրանց պետք էլ չէ, քանի որ միավորներ շահելու համար կարող են ամբիոնից չհիմնավորված ելույթներ ունենալ եւ քննադատել: Հուսախաբ եղած արդարադատության նախարարն էլ բողոքեց, թե ինքն ավելի պրոֆեսիոնալ քննարկում էր սպասում: Սակայն ո՞րն էր նման ածիտածի պատճառը, ըստ էության փաթեթային եղանակով քննարկվող օրինագծերը միայն մի քանի փոփոխություն էին նախատեսում:

Երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունք ունեն Հայաստանի ցանկացած կազմակերպություն եւ քաղաքացի, բացառությամբ դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացիների, նախնական կալանքի կամ ազատազրկման վայրերում գտնվող քաղաքացիների, զինծառայողների, դատախազության, ներքին գործերի, ազգային անվտանգության բնագավառի աշխատողների: Ուժայիններին համար սակայն առաջարկ եղավ հնարավորություն տալ մասնակցելու նման հրապարակային միջոցառումներին, բայց չկազմակերպել:

Երթեր, ցույցեր, հանրահավաքներ կազմակերպելու թույլտվությունը տալիս են քաղաքների դեպքում քաղաքապետները, համայնքների դեպքում համայնքապետները: Նման թույլտվություն չտվելու դեպքում, եթե նման միջոցառումն այնուամենայնիվ, կայանում է, կազմակերպիչները ենթարկվում են վարչական պատասխանատվության: Առաջին նման դեպքում նշանակվում է տուգանք 15 օրով: Հրապարակային միջոցառումներ չեն թույլատրվում, եթե խախտվում են դրանց անցկացման պայմանները՝ սահմանված ժամկետը, նախատեսված վայրն ու երթուղին, եւ եթե դրանց անցկացման կամ ընթացքի ժամանակ իրական վտանգ է առաջանում անձանց կյանքին, առողջությանը, անվտանգությանը կամ պետությանը, համայնքներին, մարդկանց, կազմակերպություններին գույքային վնաս հասցնելու դեպքում: Այս պարագաներում վարչական իրավախախտումների վերաբերյալ կից օրինագծում սահմանվում է կազմակերպիչների եւ մասնակիցների (միայն համապատասխան իրավախախտումներում մեղադրվող) ազատազրկում մինչեւ 10 տարի ժամկետով: Պատգամավոր Կիմ Բալայանը, որը, չհասկացվեց՝ իր ամենական տեսակե՞տն է հայտնում, թե՞ պետական հանձնաժողովի, հակառաջ, թե, ասենք, մի քանի հրահրիչներ միտումնավոր նման իրավիճակներ են ստեղծում, ինչո՞ւ պիտի կազմակերպիչը նման խստագույն պատժի ենթարկվի: Եթե արդեն բացահայտվել են մեղավորները, գոյություն ունի քրեական օրենսգիրքը, որի համապատասխան հոդվածներ լուծում են նրանց պատասխանատվության:

Առաջին ընթերցմամբ ընդունված նախագիծը խորհրդարան-կառավարություն առճակատման պատճառ դարձավ: Ինչպես ասվեց, նախագիծը ստացավ ընդդիմադիր ուժերի ուժգին քննադատություն: Ինչպես ասվեց, նախագիծ ներկայացնելիս Դավիթ Հարությունյանը, որի հիմնավորումները օրենքի վերաբերյալ խորհրդարանականները ավիններով ընդունեցին: Արտակ Սադոյանն, օրինակ, նախագիծը համարեց մարդկանց իրավունքների սահմանափակման փորձ, իսկ «Կրակոս» ելույթների սիրահար կոմունիստ Նորիկ Պետրոսյանը, չգիտես ինչպես առանցքներ գտնելով, հարցը կապեց հոկտեմբերի 27-ի ոճրագործության հետ, թե իբր եթե կառավարությունը չի կարողանում իրեն պաշտպանել, ինչպե՞ս կարող է պաշտպանել, ասենք, հանրահավաքի եկած մի քանի հազարի հասնող ժողովրդին: Աժ փոխխոսնակ Տիգրան Թորոսյանի նյարդերն այստեղ տեղի տվեցին, եւ նա նման խոսակցությունները պարզապես զգրախոսություն համարեց, ասելով, թե պատգամավորներից շատ շատերը չեն էլ թերթում օրինագծերը, եւ դա նրանց պետք էլ չէ, քանի որ միավորներ շահելու համար կարող են ամբիոնից չհիմնավորված ելույթներ ունենալ եւ քննադատել: Հուսախաբ եղած արդարադատության նախարարն էլ բողոքեց, թե ինքն ավելի պրոֆեսիոնալ քննարկում էր սպասում: Սակայն ո՞րն էր նման ածիտածի պատճառը, ըստ էության փաթեթային եղանակով քննարկվող օրինագծերը միայն մի քանի փոփոխություն էին նախատեսում:

Երթեր եւ ցույցեր անցկացնելու իրավունք ունեն Հայաստանի ցանկացած կազմակերպություն եւ քաղաքացի, բացառությամբ դատարանի վճռով անգործունակ ճանաչված քաղաքացիների, նախնական կալանքի կամ ազատազրկման վայրերում գտնվող քաղաքացիների, զինծառայողների, դատախազության, ներքին գործերի, ազգային անվտանգության բնագավառի աշխատողների: Ուժայիններին համար սակայն առաջարկ եղավ հնարավորություն տալ մասնակցելու նման հրապարակային միջոցառումներին, բայց չկազմակերպել:

Երթեր, ցույցեր, հանրահավաքներ կազմակերպելու թույլտվությունը տալիս են քաղաքների դեպքում քաղաքապետները, համայնքների դեպքում համայնքապետները: Նման թույլտվություն չտվելու դեպքում, եթե նման միջոցառումն այնուամենայնիվ, կայանում է, կազմակերպիչները ենթարկվում են վարչական պատասխանատվության: Առաջին նման դեպքում նշանակվում է տուգանք 15 օրով: Հրապարակային միջոցառումներ չեն թույլատրվում, եթե խախտվում են դրանց անցկացման պայմանները՝ սահմանված ժամկետը, նախատեսված վայրն ու երթուղին, եւ եթե դրանց անցկացման կամ ընթացքի ժամանակ իրական վտանգ է առաջանում անձանց կյանքին, առողջությանը, անվտանգությանը կամ պետությանը, համայնքներին, մարդկանց, կազմակերպություններին գույքային վնաս հասցնելու դեպքում: Այս պարագաներում վարչական իրավախախտումների վերաբերյալ կից օրինագծում սահմանվում է կազմակերպիչների եւ մասնակիցների (միայն համապատասխան իրավախախտումներում մեղադրվող) ազատազրկում մինչեւ 10 տարի ժամկետով: Պատգամավոր Կիմ Բալայանը, որը, չհասկացվեց՝ իր ամենական տեսակե՞տն է հայտնում, թե՞ պետական հանձնաժողովի, հակառաջ, թե, ասենք, մի քանի հրահրիչներ միտումնավոր նման իրավիճակներ են ստեղծում, ինչո՞ւ պիտի կազմակերպիչը նման խստագույն պատժի ենթարկվի: Եթե արդեն բացահայտվել են մեղավորները, գոյություն ունի քրեական օրենսգիրքը, որի համապատասխան հոդվածներ լուծում են նրանց պատասխանատվության: Առաջին

ԳՈՌ ԱԲԳԱՐՅԱՆ

ՀԻՇԱՏԱԿՆ ԱՐԴԱՐՈՑ

Կարեն Դեմիրճյանը ապրիլի 17-ին կդառնար 69 տարեկան

ԵՐԵՎԱՆ, 17 ԱՊՐԻԼ, ՆՈՅՅԱՆ ՏՊՊԱՆ: Ապրիլի 17-ին լրացավ Հայաստանի Ազգային հերոս Կարեն Դեմիրճյանի ծննդյան 69-րդ տարելիցը: Երեւանի Կոմիտասի անվան պանթեոնն այդ օրը կրկին ուխտագնացության վայր էր հիշեցնում. Հայաստանի կառավարության, խորհրդարանի, քաղաքական, գիտական, մշակութային շրջանակների ներկայացուցիչները եկել էին իրենց հարգանքի տուրքը մատուցելու ականավոր պետական գործչի եւ մեծ հայորդու հիշատակին, կիսելու հարազատների եւ մտերիմների չփարատվող վիշտը: Ելույթներ չկային. մարդիկ մոտենում էին, ծաղկեփնջեր դնում շիրիմին եւ լուռ կանգնում, սակայն այդ լռությունը կարծես ավելի խոսուն էր, քան ցանկացած խոսք:

14 տարի Հայաստանի Կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանը մնացել է հայաստանցիների հիշողության մեջ որպես հանրապետության լավագույն ղեկավարներից մեկը, որն անգամ խորհրդային տարիներին կարողացավ մնալ սկզբունքային եւ անկոտրում անձնավորություն:

Ժամանակակիցների եւ գործընկերների վկայությամբ, Դեմիրճյանին հաջողվում էր պահպանելով երկրի ղեկավարի դիրքը՝ միաժամանակ դիմակայել Կենտրոնի ոչ հայանպաստ որոշումներին: Հիշվեց, որ նա մասնավորապես հրաժարվել էր Մեղրիի տարածքով անցնող ճանապարհի շինարարության Մոսկվայի ծրագրից, այդ պատճառով զրկվելով Սովետական Միության հերոսի կոչում ստանալու եւ ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոյին անդամակցելու հնարավորություններից:

Նպաստակը մեկն է՝ օգնել գյուղացուն

Երաշտի հետեւանքները դեռեւս վերացվում են

Անցյալ տարվա երաշտի աղետալի հետեւանքների մասին այժմ էլ խոսվում է եւ դեռ կխոսվի, քանի որ հասցված վնասը մինչեւ հիմա զգացնել է տալիս անդրադառնալով անասնաբուծությանը, վարուցանքին եւ այլն: Երաշտի եւ սակավաջրության հետեւանքների մեղմացմանն ուղղված միջոցառումների շարքում օրերս իրագործվեց եւս մեկը՝ 38-40 հազար հեկտար գարնանավարի, նախացանքային մշակության, ցանքի, սերմացուի ներկրման ծրագիր՝ Համաշխարհային բանկից ֆինանսավորվող:

«Ոռոգման համակարգերի վերականգնման» ծրագրի իրականացման գործակալությունը, առաջնորդվելով ՀՀ կառավարության՝ երաշտի հետեւանքների վերացմանն ուղղված միջոցառումներ իրականացնելու որոշումով, այս տարվա փետրվարից նախաձեռնեց ավելի քան 4 մլն դոլար արժողությամբ մի ենթածրագրի իրագործումը: Ենթածրագրով նախատեսված էր հանրապետության 10 մարզերում՝ 39 հազ. 410 հա հողատարածության ընդգրկումով, կատարել գարնանավարի, նախացանքային մշակության եւ ցանքի աշխատանքներ, որոնք իրականացնելու համար Հայաստան պիտի ներկրվեր 8 հազ. տոննա գարու սերմացու:

Երեկ, կատարված աշխատանքները ներկայացնելով լրագրողներին, ծրագրի իրականացման գործակալության տնօրեն Ա. Ղազարյանն համփոփումն նշեց, որ նախատեսված միջոցառումները բավականին սահմանափակ ժամկետում հաջողությամբ իրագործվել են եւ այժմ գրեթե ավարտվում են: «Սերմացուի ձեռքբերման մրցույթում հաղթող ճանաչվեց Եղվարդի համակցված կերերի գործարանը, մանրամասնեց տնօրենը, իսկ Նովոռոսիյսկի նավահանգստից Հայաստան տեղափոխելու ծախսն ու վերահսկողությունը ստանձնեց ամերիկյան կողմը»: Ներկայումս 8 հազ. տոննա սերմացուն Հայաստանում է, 7 հազարն արդեն բաշխված է 611 գյուղերի միջեւ, հազարը բաշխման ընթացքի մեջ է եւ նախատեսված է Կոտայքի, Սյունիքի ու Արագածոտնի մարզերի համար: 39 հազ. 410 հա հողատարածության ավելի քան 75 տոկոսում իրականացվում են վարուցանքի աշխատանքներ, անավարտ միջոցառումներն էլ, Ա. Ղազարյանի հավաստմամբ, առաջիկայում կամփոփվեն:

Լրագրողների հարցին, թե որեւէ կերպ վերահսկվո՞ւմ է սերմացուի իրացումը (քանզի փիչ չեն նախադեպերը, երբ գյուղացուն հասանելիք սերմացուն ինչ-ինչ «պատճառներով» նախատեսվածից պակաս չափով է տրվել), ծրագրի իրականացման գործակալության տնօրենը վստահեցրեց. «Կառավարական հանձնաժողովից զատ ձեւավորվել են մարզային հանձնաժողովներ, որոնց հետ համատեղ են գործում նաեւ գյուղնախարարության ներկայացուցիչները: Բոլորիս նպատակն ընդհանուր է՝ օգնել գյուղացուն»: Մնում է միայն, որ այդ օգնության հասցեատերը՝ գյուղացին էլ համակարծիք լինի վերոհիշյալ հավաստիացմանը:

ԱՆՈՒՇ ԴՈՎԼԱԹՅԱՆ

«Ղարաբաղյան հակամարտությունը վերածվել է ...

Սկիզբը էջ 1

Հենց ինֆորմացիայի քաղցի պատճառով երկրի քաղաքական շրջանակները որեւէ դիրքորոշմամբ հանդես գալ չեն կարողանում: Նրանք հույս ունեն, որ նման հնարավորություն կստանա մոտակա ժամանակահատվածում նախագահի հետ հանդիպելուց հետո, ինչի պայմանավորվածությունը ձեռք է բերվել դեռ նախագահի՝ ԱՄՆ մեկնելուց առաջ:

Այսուհանդերձ, հայաստանյան քաղաքական շրջանակներում որեւէ մտավախություն հնարավոր ճնշումների առումով գոյություն չունի: Աժմ նախագահ Վազգեն Մանուկյանի խոսքերով՝ «լափավոր ճնշումներ միշտ էլ եղել են, սակայն խնդիրն այն է, թե ճնշումներ ասելով ինչ ենք մենք հասկանում: Առանց ձայն հանելու էլ հասկացվում է, որ որոշ դեպքերում մեզ շոկուլադ կտան, որոշ դեպքերում՝ ոչ»: «Օրինաց երկիր» կուսակցության ղեկավար Արթուր Բաղդասարյանի տրամադրվածությունից ելնելով կարելի է ասել, որ շոկուլադների մեծ մասը հենց մեզ են տալու: Նրա կարծիքով, Քի Վեսթից ստացված տեղեկությունները եւ նախագահ Քոչարյանի հակիրճ մեկնաբանությունը հիմք են տվել կարծելու, թե «մենք տեսանք, որ մտահոգիչ բաներ չկան հայկական կողմի համար»:

Հանգիստ է նաեւ Դաշնակցությունը, որը, ինչպես հայտնի է, դեռ Քի Վեսթից առաջ հանդես եկավ կոշտ հայտարարությամբ, թե բանակցությունների ցանկացած ընթացք չի կարող լինել Հայաստանի տարածքային ամբողջականության հաշվին: Կուսակցությունը հիմա էլ պնդում է, թե տարածքային փոխանակումների մասին իրենք չեն էլ ուզում լսել՝ ի պատասխան մամուլում հայտնված այն տեսակետի, թե բանակցությունների սեղանին դարձյալ հայտնվել է Մեղրու տարբերակը: Ամեն դեպքում, սակայն, նոր առաջարկը, ըստ Աղվան Վարդանյանի, չի կարող պարտադրված լինել. «Նոր տարբերակը պիտի առաջանա երկու նախագահների բանակցությունների հենքի վրա: Դա չի նշանակում, թե եռանախագահողները ներկայացնելու են մի տարբերակ, որը համաձայնեցված չէ երկու կողմերի հետ: Նման տարբերակը բացառված է, եւ կողմերը չեն կարող պարտադրված առաջարկ ներկայացնել: Նման ճնշման մասին խոսելը ոչ միայն անիմաստ է, այլեւ տեղին չէ»: Ճնշումների բացառմանը կարող է նպաստել նաեւ Իրանի ներքաշումը տարածաշրջանային գործընթացներում, քանի որ «Իրանն այս տարածաշրջանում իր շահերն ունեցող պետություն է, եւ չէր կարող առնվազն իրազեկման մակարդակով ներքաշված չլինել: Դա ճիշտ լուծում էր: Ի վերջո, ղարաբաղյան հակամարտությունը վերածվել է ամբողջ տարածաշրջանի հեռանկարը պայմանավորող խնդրի»:

Իսկ Հանրապետական կուսակցությունը չի դավաճանում իր դիրքորոշմանը, թե Ղարաբաղի հարցը պետք է վճռվի կամ անկախացնելու, կամ Հայաստանի հետ «ընդհանուր պետություն» ստեղծելու ճանապարհով: Ամեն դեպքում՝ հանրապետական Գալուստ Սահակյանի խոսքերով. «Բնականաբար, ճնշումներ հնարավոր են: Այստեղ մեր դիրքորոշումն է կարեւոր»:

Հենց այստեղ է, որ քաղաքական ուժերն այս պահին այլեւս ասելիք չունեն՝ տեղյակ չլինելով Քի Վեսթի արդյունքներին եւ նախագահ Քոչարյանի որդեգրած մոտեցումներին: Արդյոք քաղաքական կուսակցությունները կպահպանե՞ն իրենց լավատեսությունը նաեւ նախագահի հետ հանդիպումից հետո, պարզ կդառնա միայն նրանց հետագա հայտարարություններից: Այս պահին ամեն ինչ կառուցվում է նախնական տպավորությունների վրա:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թաքս: 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՍԻՈՅԻ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Տնօրեն
ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՌԱՔԵԼԵԱՆ / հեռ. 529353
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Շուրջօրյա լրահավաք ծառայութիւն
/ հեռ. 529353
Apple Macintosh
համակարգային շարուածը
«Ազգ» թերթի
Յղումը «Ազգին» պարտադիր է
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

ՈՒՇԱԳԻՐ

ԼՂՀ-ն կայացած պետություն է

Կովկասյան հանրապետություններից միակը, որտեղ նկատվում է բնակչության աճ

ԼՂՀ-ում, եթե համեմատում ենք Հարավային Կովկասի մյուս հանրապետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի հետ, նկատելի է, որ բնակչության ընդհանուր կենսամակարդակը համեմատաբար բարձր է, առաջին անհրաժեշտության եւ լայն սպառման ապրանքների գները ցածր են, հարկերը՝ տանելի, արտագաղթ գրեթե չի նկատվում, գործազրկության ծավալներն այնպիսին են, ինչպես Հայաստանում, Ադրբեջանում կամ Վրաստանում: Ճիշտ է, ԼՂՀ-ում պահպանվում է ռազմական դրությունը, սակայն դա այնքան էլ չի խանգարում ժողովրդավարություն հաստատելու ջանքերին՝ խոսքի եւ մամուլի ազատության հաստատմանը: Որոշ փորձագետներ պնդում են, թե ոչ ոքի կողմից չճանաչված ԼՂՀ-ն ավելի ազատ եւ ժողովրդավարական երկիր է, քան Եվրախորհրդարանի անդամ Ադրբեջանը:

Ազատ Արցախում, սակայն, առկա է մի խնդիր, որը վստահորեն կարելի է անվանել համազգային: Խոսքը հանրապետության վերաբնակեցման մասին է, որը ԼՂՀ-ի անվտանգության ապահովման գլխավոր երաշխիքն է:

ԼՂՀ-ում, ըստ Ստեփանակերտի ոչ պաշտոնական տվյալների, բնակչության թիվը 150-160 հազար է, մինչդեռ հանրապետությունն ընդունակ է ապահովելու ավելի քան 300 հազար բնակիչների կյանքի նորմալ պայմաններ՝ անկախ ազգությունից եւ դավանանքից: ԼՂՀ վարչապետ Ա. Դանիելյանը մի քանի անգամ շեշտել է, թե 2010 թ. Արցախի բնակչության թիվը կհասնի 300 հազարի:

Արցախի արագ վերաբնակեցումը, ինչպես նշեցինք, համազգային խնդիր է, սակայն ակնհայտ է, որ այսօր ԼՂՀ-ի պետբյուջեի միջոցները չեն բավարարում այս ծրագրի ծավալները մեծացնելու եւ տեմպերն արագացնելու համար: Այս պահին Արցախը կարող է ընդունել 100 հազար մարդ՝ շուրջ 20 հազար ընտանիք. բնակլիմայական, հողային պայմանները թույլ են տալիս: Սակայն տարեկան Արցախ են վերադառնում եւ Արցախում վերաբնակվում շուրջ 200-250 ընտանիքներ: Պատճառը մեկն է. չկան վերաբնակիչների համար կառուցված տներ: Եթե հաշվի առնենք, որ նոր տուն կառուցելու համար անհրաժեշտ է շուրջ 5-6 հազար դոլար, ապա 20 հազար տան համար անհրաժեշտ է 120 մլն դոլար, ինչը հինգ միլիոնանոց սփյուռք ունեցող ազգի համար անհասանելի գումար չէ:

Արցախի վերաբնակեցման խնդրով ԼՂՀ կառավարության հետ համատեղ աշխատում է ՀՀ կառավարությանը կից միգրացիայի եւ փախստականների վարչությունը, որը հայտնաբերում եւ հաշվառում է Արցախ մեկնելու ցանկություն ունեցող ընտանիքներին: Ինչպես **«Ազգին»** տեղեկացրեց նրերին միգրացիայի եւ վերաբնակեցման բաժնի պետ Սամվել Հարությունյանը, 2000 թ. հոկտեմբերից մինչեւ այսօր Արցախ մեկնելու եւ այնտեղ մշտապես բնակվելու ցանկություն են հայտնել 2000 ընտանիքներ: Հաշվառման են վերցվել 500 ընտանիքներ, որոնց տեղափոխման աշխատանքներն սկսվել են: Արցախում վերաբնակվելու ցանկություն են հայտնում Հայաստանում, Հյուսիսային Կովկասի հանրապետություններում, Ռուսաստանի, Կրասնոդարի երկրամասում, այլ երկրներում բնակվող հայ ընտանիքներ: Քանի՞ տարեկան հաշվով ինչպիսի՞ տարիներին ընտանիքներն ազատվում են բոլոր հարկերից: «Ես հաճախ եմ մեկնում Արցախ, մեկ առ մեկ հանդիպում բոլոր ընտանիքներին, որոնք նոր են տեղափոխվել: Կարող եմ ասել, որ մարդիկ դժգոհ չեն, սկսել են հող մշակել, կարվել հողին ու բնությանը», ասում է պրն Հարությունյանը:

Մնում է հուսալ, որ սփյուռքահայերն Արցախի վերաբնակեցման ծրագրին իրենց օգնությունը կբերեն: Դժվար է պատկերացնել Հայաստանի ապագան առանց ազատ, անկախ, բարգավաճող Արցախի:

ԹԱԹՈՒԼ ՀԱՍՈՒԲՅԱՆ

«ԿԼՈՐ ՍԵՂԱՆ»

Մասնավորեցնե՞լ, թե՞ չմասնավորեցնել

Քննարկվում էր բաշխիչ ցանցերին վերաբերող այս հարցը

«Հայաստանի էներգետիկ ապագան» վերնագիրն էր կրում երեկ Գիտությունների ազգային ակադեմիայում հրավիրված «կլոր սեղանը», որը նախաձեռնել էր իր գոյության մասին երբեմն-երբեմն ազդարարող «Արժանապատիվ ապագա» կուսակցությունը: Կուսակցությունը խորհրդարանական ընտրություններին հաջորդած երկամյա նիրհից արթնացել էր՝ շնորհիվ Հայաստանում օտարերկրյա մի դեսպանության ֆինանսավորման եւ միջազգային կազմակերպություններից ստացած դրամաշնորհների: Սակայն, հանուն արդարության պետք է նշել, որ արժանահիշատակ ելույթներ եւ վերլուծություններ միջոցառման ընթացքում արձանագրվեցին:

Առաջինը ելույթ ունեցավ ՀՀ էներգետիկայի նախարարության ներկայացուցիչ Վիլեն Հակոբյանը, որի ձանձրալի եւ Հայաստանի էներգետիկայի վերջին տարիների անցած ուղու վերաբերյալ ելույթը «կլոր սեղանի» մասնակիցները լսեցին մեծ համբերությամբ: Ի դեպ, նախապես ծրագրված էր, որ այդ ելույթով պետք է հանդես գար էներգետիկայի նախարար Կարեն Գալուստյանը, որը, սակայն, պաշտոնական այցով գտնվում էր Թեհրանում:

Առավել հետաքրքրություն էր ներկայացնում էներգետիկ ռազմավարական կենտրոնի տեղեկատվական-վերլուծական ամփոփագիրը, որը ներկայացրեց կենտրոնի փոխտնօրեն Արամ Մարջանյանը: Ամփոփագրում մանրամասն շարադրված էր բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման հարցի ժամանակագրությունը, որին անմիջապես հաջորդում է եզրակացությունը: Այն է՝ չմասնավորեցնել բաշխիչ ցանցերը, քանի որ դրանք ունեն ռազմավարական նշանակություն, մասնավորեցումից հետո անվճարունակ բնակչության սոցիալական վիճակը կվատթարանա, պետությունն այլեւս չի կարող վերահսկել մենաշնորհային դարձած ոլորտը եւ այլն: Որպես այլընտրանք առաջարկվում է մասնավորեցնել բաշխիչ ցանցերը՝ պահպանելով 15 տոկոս պետական բաժնեմասը: Սակայն միաժամանակ հակասելով նախկին եզրակացությանը, առաջարկվում է 51 տոկոս բաժնեմասով մասնավորեցնել «ցանկացած որակավորված ռազմավարական ներդնողին» եւ միայն ռուսական ընկերությանը: Հիմնավորումներից առավել առարկայականը Ռուսաստանի՝ Հայաստանի ռազմավարական դաշնակից եւ վառելիքի ու այլ էներգակիրների հիմնական մատակարար լինելու փաստն էր: Նշվում է նաեւ, որ բաշխիչ ցանցերի սկզբնական գինը 470 մլն դոլար էր, այնուհետեւ կազմեց 220 մլն դոլար, եւ ի վերջո կառավարությունը հաշվեկշռային արժեքի համարեց 136 մլն դոլարը: Այդուհանդերձ, մրցույթի մեկնարկային գին չսահմանվեց, եւ կառավարությունն առաջնորդվեց «ով շատ գին կտա՝ նա էլ տեր կդառնա» սկզբունքով:

Հեղինակները տեղեկացրին, որ ամփոփագիրը կհրատարակվի նաեւ ռուսերեն եւ անգլերեն: Չերծ մնալով որեւէ գնահատական տալուց կենտրոնի ուսումնասիրությանը, կցանկանայինք հարցնել, թե ի՞նչ իմաստ ունի այս ամենը ծեռնարկել այժմ, երբ 1-2 օր հետո կբացվեն բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման մրցույթի մասնակիցների ծրագրերը: Ինչո՞ւ են «կլոր սեղանի» մասնակիցներն արթնացել միայն այժմ, երբ գործընթացն իր տրամաբանական ավարտին է հասնում: Այս ամենը լուրջ կասկածներ է առաջացնում, թե նրանց մտահոգությունն իրո՞ք բաշխիչ ցանցերի սեփականաշնորհման հետեւանքով ստացվող կացությունն է, թե՞ պատեհ առիթն օգտագործելով՝ քաղաքական միավորներ շահելը:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Ամերիկացիներն Իջեւանի գինու գործարանում

Ինչպես հաղորդեցին Տավուշի մարզպետարանի լրատվության բաժնից, օրերս Իջեւանի գինու գործարան էին այցելել Հայաստանում ԱՄՆ դեսպան Մայքլ Լեմոնը եւ ԱՄՆ գյուղատնտեսության մարկետինգի աջակցության գծով տնօրեն Հարլի Մարտինը: Գործարանն այժմ, բացի առաջնային գինու գործարան եւ գինեհումքի մատակարար լինելուց, ստեղծել է նոր՝ շշալցման արտադրամաս եւ բողարկում է 9 սովորական եւ 1 փրփրուն գինիներ: Արդեն 1 տարի նրան մասնագիտական խորհուրդներով, շշերի ձեռքբերման եւ արտադրանքի արտահանման հարցերով օժանդակում է ԱՄՆ գյուղատնտեսությունը: Վերջինիս ներկայացուցիչը Իջեւանում գտնվելու ժամանակ նշել է, որ բացի գործարանին օգնելուց, մշակվում են Տավուշում խաղողագործության ծավալները մեծացնելու ծրագրեր: ԱՄՆ դեսպանն իր հերթին հայտնել է, որ Իջեւանի գինին մտադիր են ներկայացնել Նյու Յորքում կայանալիք ներդնողների կոնֆերանսին: «Իջեւանի գինու գործարան» ԲԲԸ-ի նախագահ Ավետիք Գալուստյանը նշել է, որ ընկերության արտադրանքը արտահանվում է ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա:

«Գագիկ Ջհանգիրյանը զբաղված էր Ռ. Քոչարյանի դեմ կեղծ ցուցմունքներ կորզելով»

Սկիզբը էջ 1

Դրանից հետո՝ մայիսի 30-ին ինքնին Ջոն Բարխոյանը ցուցմունքներ է վերցրել գործադրված բռնություններ-ի վերաբերյալ, առերեսումներ են արվել խոշտանգվողների եւ դրանց մասնակցող անձանց հետ: Քննչական գործողություններ են կատարվել, սակայն այդ բոլոր նյութերը բացակայում են քրեական գործից: Ամբաստանյալը պահանջեց հրապարակել իր կողմից նշված ցուցմունքները, որից հետո խոստացավ ցուցմունք տալ: Մեղադրող Հ. Մարտիրոսյանը ի պատասխան հայտնեց, որ դատախազության օրենքի 37 հոդվածի համաձայն ինքնիշներին, դատախազներին վերաբերող ինքնությունների մասը դատախազության իրավասության շրջանակում է գտնվում, դրա համար էլ չեն հրապարակել: «Ձեր վկայակոչածի վերաբերյալ որեւէ նյութ գոյություն չունի», կտրուկ հայտարարեց պետական մեղադրողը:

Ն. Հունանյանն ավելացրեց, որ եղբոր՝ Կարեն Հունանյանի հետ նույնպիսի ինքնություն է տարվել, նրա մասով նյութերը կան քրեական գործում, բայց իրեն վերաբերող մասը չկա: Ն. Հունանյանը հայտնեց, որ պահանջված նյութերով ցույց կտա, թե ինչով էր զբաղված Գ. Ջհանգիրյանը հոկտեմբերի 28-ից սկսած: «Գ. Ջհանգիրյանը զբաղված էր Ռոբերտ Քոչարյանի դեմ կեղծ ցուցմունք կորզելով, որոնք հանվել են քրեական գործից»: Մեղադրող Հ. Մարտիրոսյանը փոխադարձեց. «Դուք եք զրպարտել հանրապետության նախագահին, կատարված ծառայողական ինքնության արդյունքներով՝ ձեզ չեն խոշտանգել»:

Փաստաբան Ռուբեն Սահակյանը ամբաստանյալի միջնորդության վերաբերյալ իր տեսակետը հայտնելիս նշեց, թե իրեն մասնավորապես մի փաստաթուղթ է հայտնի, որը գործում չկա, խոսքն Ալեքսան Հարությունյանի՝ իր նախկին պաշտպանյալին է վերաբերում, որի հարցաքննությանը մասնակից է եղել: «Բա ո՞ւր է Ալեքսան Հարությունյանի ցուցմունքը, ո՞ւր է դիմումը, որը գրել է Ն. Հունանյանն իրեն հարցաքննելու խնդրանքով», հայտնեց փաստաբանը: Ռ. Սահակյանը նշեց, որ քրեական գործի նյութերի տրամաբանությունից ելնելով նման նյութեր կան, հետեւաբար գործը պետք է քննել ամբողջությամբ: Այդ տեսակետը պաշտպանեցին նաեւ փաստաբաններ Ա. Աբաբեկյանը եւ Ն. Չիլինգարյանը՝ դատարանին կոչ անելով դատախազությունից պահանջել վկայակոչված նյութերը:

Կ. Դեմիրճյանի իրավահաջորդի ներկայացուցիչ Ասոն Սարգսյանը տեսակետ հայտնելիս նշեց, որ իր կոլեգան (նկատի ունենալով Ռ. Սահակյանին) ամբաստանյալի հայտարարությունը միջնորդություն դարձրեց, սակայն ինքն ամբաստանյալին առաջարկում է ցուցմունք տալ ասվածի կապակցությամբ, այնուհետեւ կհարցաքննեն ինքնիշ Ջոն Բարխոյանին, որից հետո կպարզեն այդ հարցը: Դատավորը կողմ էր, որպեսզի մեղադրող կողմին ժամանակ տրամադրվի՝ ամբաստանյալի ներկայացրած միջնորդության հիմքերը պարզելու համար: Նույն պահանջը ներկայացրեց նաեւ պետական մեղադրողներից ՀՀ գլխավոր դատախազության ներկայացուցիչ Գագիկ Ավետիսյանը, որը եւ բավարարվեց՝ նկատի ունենալով, որ այսօրվա դատական նիստում մեղադրողները պարզաբանումներ կներկայացնեն:

Երեկվա նիստում հրապարակված ցուցմունքներն ամբաստանյալը տվել էր 2000 թ. մայիս եւ հունիս ամիսներին, որով էլ ավարտվել էր քրեական գործի նախաքննությունը: Վերջին ցուցմունքներում, մասնավորապես մայիսի 24-ի, ամբաստանյալը հրաժարվել էր Ալեքսան Հարությունյանի, Հարություն Հարությունյանի, Մուշեղ Մովսիսյանի, Հայկ Բաբուխանյանի եւ Հրանտ Մարգարյանի դեմ տված ցուցմունքների այն մասից, ըստ որոնց նշված անձինք մասնակից էին հոկտեմբերի 27-ի գործողություններին՝ դրանք համարելով իր դեմ կիրառված ճնշումների արդյունք:

Ամբաստանյալը հայտնել է, որ հոկտեմբերի 27-ի գործողությունների դրդիչ եւ կազմակերպիչ է դիտարկում «վարչապետ Վազգեն Սարգսյանի խունտան՝ իր ազգակցական քաղաքականությամբ»: Իր գործողություններով արտահայտել է հայ ժողովրդի «առնվազն կեսի ցանկությունը»: Առաջարկված մեղադրանքներում իրեն մեղավոր չի ճանաչել, հայտարարելով, որ մասնավորապես «հայրենիքի դավաճանությունը» ժամանակի իշխանություններին է հատուկ, զոհացել է սպանությունների համար եւ կրկին պնդել, որ դրանք կատարել են ինքնաշիրապետումը եւ կառավարումը կորցնելու պատճառով: Ձեռքերը ծեռ են բերել ինքնապաշտպանության համար, գործողությունների նախնական ծրագիր չեն ունեցել, եւ ինքը փորձել է կապվել ՀՀ նախագահի հետ՝ հանձնվելու նպատակով: Շեշտել է, որ 7 անձանցից բացի, հոկտեմբերի 27-ի գործողությունների մասին ոչ ոք չի իմացել:

Դատական նիստի սկզբում ամբաստանյալ Միսակ Մկրտչյանը միջնորդեց դատարանին «Հոկտեմբերի 27»-ի քրեական գործից անջատել իր վերաբերյալ եղած նյութերը եւ դիմել ՀՀ գլխավոր դատախազությանն՝ իր նկատմամբ քրեական գործ հարուցելու համար, միաժամանակ պահանջելով պատժել իրեն ապօրինի կալանավորողներին: Նշենք, որ Միսակ Մկրտչյանն ամբաստանյալի կարգավիճակ է ստացել իբրեւ վկա հարցաքննվելուց հետո, կամովին խոստովանելով, որ իր տանը 100 փամփուշտ կա: Հիշյալ խոստովանությունը պատճառ է դարձել նրան կալանավորելու համար, որից ազատվեց առողջական վատթար վիճակի պատճառով: Այդուհանդերձ դատարանը գտավ, որ միջնորդությունը չպետք է բավարարել, քանի որ որեւէ ապացույց դատարանում չի հետազոտվել: Որքան էլ զարմանալի է, դատավորից բացի նույն տեսակետին էր նաեւ փաստաբան Տիգրան Ջանոյանը, ակամա հաստատելով, որ մարդուն կարելի է ամբաստանյալի կարգավիճակում պահել՝ առանց նրա դեմ քրեական գործ հարուցելու:

Վազգեն Սարգսյանի իրավահաջորդի ներկայացուցչի շահերն այսուհետ դատարանում կպաշտպանի նաեւ նրա հարազատների կողմից հրավիրված Ռուսաստանի փաստաբանների գիլդիայի անդամ Օլեգ Յունուշեւը: Դատարանը երեկ հաստատեց նրա մասնակցությունը: Ի դեպ, առաջին անգամ է այլ երկրի փաստաբանին թույլատրվում մասնակցել Հայաստանում ընթացող դատաքննությանը:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Երբ մարդիկ դժգոհում են երկրի սոցիալ-տնտեսական վիճակից, նշում, որ որեւէ դրական փոփոխություն տեղի չի ունեցել, եւ նրանց այդ տրամադրություններն էլ օգտագործում են քաղաքական որոշակի շրջանակներն իշխանություններին քննադատելիս, ապա վերջիններս կարող են մատնանշել առնվազն տնտեսության 2-3 ճյուղ, որտեղ անցած մեկ տարվա ընթացքում առաջընթացն անժխտելի է: Իհարկե, չի կարելի մոռանալ, որ առաջընթացը սկիզբ առավ այն ժամանակ, երբ նախագահ Ռոբերտ Քոչարյանի կազմավորած կառավարությունը գլխավորում էր վարչապետ Արամ Սարգսյանը: Ընդունելով, որ դժվար գործը մեռյալ կետից շարժելն է, ինչն իրականացրեց նախկին վարչապետը, հարկ է նաեւ նշել, որ նրա պաշտոնանկությունից հետո գործընթացը կանգ չառավ:

Առավել տեսանելի առաջընթացն արձանագրվեց Հայաստանի արդյունաբերության ավանդական համարում ունեցող ճյուղում՝ լեռնամետալուրգիայում: Ավելի կոնկրետ՝ պղնձի եւ մոլիբդենի արդյունահանման եւ մշակման ապարեզում: Եվ դա պատահական չէ: Հայաստանի ընդերքը հարուստ է այս հանածոներով: Մոլիբդենի համաշխարհային պաշարների 7-9 տոկոսը մեր երկրում է, եւ դրանցով Հայաստանը երրորդն է աշխարհում (ԱՄՆ-ից եւ Չիլիից հետո): Հայաստանում է գտնվում նաեւ պղնձի համաշխարհային պաշարների մեկ տոկոսը: Դրանց արդյունահանման եւ մշակման գործընթացի վերականգնումը, ինչն ըստ էության ընդհատված էր վերջին 9-10 տարիներին, առաջնահերթ նշանակություն էր ձեռք բերում:

2000 թ. աորիլից, ուղիղ մեկ տարի առաջ, լեռնամետալուրգիական հսկաների գործարկումը սկսեց իրականություն դառնալ: Բնագավառի միակ աշխատող ձեռնարկությանը՝ Զանգեզուրի (Քաջարանի) պղնձամետալուրգիական կոմբինատին (ՊՄԿ) նախ միացավ Ալավերդու «Մանես եւ Վալեխը», այնուհետեւ Ագարակի, ապա Կապանի պղնձամետալուրգիական կոմբինատները: Արդեն այս տարվա ընթացքում սկսվեց Սիսիանի հանքավայրերի շահագործումը եւ լեռնահարստացուցիչ ֆաբրիկայի վերակառուցումը: Վերջինիս ծրագիրն իրականացման դեռեւս նախնական փուլում է: Այդ փուլում, ըստ ՀՀ արդյունաբերության նախարարության տեղեկությունների, հանքարդյունաբերության վարչության պետ Արթուր Ասուդյանի, նախատեսված է 22-24 տոկոս պղնձի պարունակությամբ հանքանյութ ստանալ, որից ցածր ցուցանիշի դեպքում աշխատանքն անարդյունավետ կլիներ: Սեպտեմբերին նախատեսվում է լիարժեք շահագործման հանձնել լեռնահարստացուցիչ ֆաբրիկան, որի վերականգնման ծրագիրն իրականացնում է ռումինական «Մետալ պրինտ» ընկերությունը: Վերջինս 1 մլն դոլարի ներդրում է կատարելու այստեղ, իսկ փոխարենը ստանալու է ֆաբրիկայի արտադրանքի վաճառքի բացառիկ իրավունքը: Ներկայումս Սիսիանում հանքավայրի եւ ֆաբրիկայի վերականգնման լուրջ աշխատանքներ են տարվում, ինչը հույս է ներշնչում, որ ծրագրված ժամկետին դրանք լիարժեք կգործեն եւ տեսականից բացի, կլուծվեն նաեւ սոցիալական հարցեր: Բարձր վարձատրվող աշխատանքով կապահովվի 350-400 մարդ:

Վերադառնալով լեռնամետալուրգիայի վերջին մեկ տարվա անցած ուղին, նշենք, որ այստեղ, Արթուր Ասուդյանի կարծիքով, հարյուր տոկոսով կատարվել է այն, ինչ ծրագրվել էր: Վերագործարկվել են հիշատակված ձեռնարկությունները, արձանագրվել է արտադրության ծավալների 50 տոկոս աճ: Ճիշտ է, խնդիրներ կան (տրանսպորտային, ֆինանսական, պղնձի եւ մոլիբդենի միջազգային գների տատանումների եւ այլն), սակայն դրանք աշխատանքային բնույթի են: Այդ դեպքում կարելի՞ է ասել, որ այս ոլորտում լուրջ խնդիրներ այլեւս չկան: Որպես այդպիսիք՝ շինանյութերի եւ հանքարդյունաբերության վարչության պետը անհրաժեշտ համարեց աշխատանքային ռիթմի կայունացումը եւ ձեռնարկությունների շահութաբերության բարձրացումը: Արտադրության ծավալների աճը նախատեսվում է 10-15 տոկոսի սահմաններում, ինչին հասնելու դեպքում կունենանք ոչ պակաս նվաճում, քան անցած տարվա 50 տոկոսանոց աճն էր: Սակայն «Մանես եւ Վալեխի» Հայաստանում պղնձի արտադրության զարգացման, Ագարակի ՊՄԿ-ի ամսական 200 հազ. տոննա հանքավայրի գերավճարների վերադարձը ձգձգելն էր: Այնուամենայնիվ, արդյունաբերության եւ առեւտրի նախարարությունը գնաց այն բանին, որ բանակցելով մրցույթի մասնակիցների հետ, կարողացավ Հայաստանի ձեռնարկությունների համար պահպանել վաճառվող արտադրանքի զգալի մասը: Դրա շնորհիվ առաջարկված պղնձի 13 հազ. տոննայից 6 հազարը (մոտ 40 տոկոս) գնեց «Մանես եւ Վալեխը», իսկ 5,6 հազար տոննա մոլիբդենի 2,8 հազար տոննան (50 տոկոս) մաքուր երկաթի գործարանը:

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Լեռնամետալուրգիան մեկ տարի անց

Ի՞նչ է կատարվել եւ ի՞նչ է նախատեսվում

Այս կարեւոր խնդիրը, որը դրված է հանքարդյունաբերության եւ շինանյութերի արդյունաբերության առջեւ, պետության եւ ընդերքը շահագործողի հարաբերությունների կարգավորումն է: Այսօրվա ընկալմամբ, եթե հանքավայրը պետական է, նշանակում է, որ այն ոչ մեկինը չէ: Այս վիճակը շտկելուն է կոչված մշակման փուլում գտնվող «Կոնցեսիաների մասին» օրենքը: Այս փաստաթղթով պետությունը կդառնա ընդերքի իրական տերը եւ հանքավայրը շահագործողի գործընկերը: Կստեղծվի նաեւ մոդելային պայմանագիր, որով կճշտվեն պետության եւ շահագործողի իրավունքներն ու պարտականությունները: Այսինքն՝ այս ոլորտում կսկսեն գործել խաղի կանոններ, որոնք այժմ բացակայում են: Օրենսդրական այս փոփոխության նպատակը մեր ընդերքի պաշարների արդյունավետ օգտագործումն է, որոնք, ինչպես հայտնի է, չեն վերականգնվում:

ԱՐԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Հեղեղումները եւ հողի էրոզիան կարելի է կանխել ու իպաոռ վերացնել

Ամեն տարի Հայաստանի Հանրապետությունից դուրս է գալիս 1-2 մլրդ խմ հեղեղաջուր: Ինչպես բոլոր ջրերը, հեղեղաջուրն էլ ունի արժեք: Մեկ խմ-ի արժեքը գնահատվում է 6-10 դրամ, հետեւաբար 1 մլրդ խմ-ի արժեքը կկազմի 6-10 մլրդ դրամ, իսկ 2 մլրդ-ի արժեքը կրկնակի: Դա մեծ հարստություն է, որն առայժմ չենք տնօրինում: Դա դեռ բոլորը չէ. հեռացող հեղեղաջրերը մեծ վնաս են պատճառում Հայաստանի Հանրապետությանը:

1946 թ. Երեւան քաղաքի հեղեղումների ժամանակ քանդվեց 800 տուն, 610 տուն մեծ չափով վնասվեց, եղան մարդկային զոհեր, 58 մլն ռուբլու վնաս պատճառվեց Երեւանի քաղաքային տնտեսությանը: Հեղեղումներն ամեն տարի պարբերաբար մեծ վնաս են պատճառում Հայաստանի բոլոր մարզերին: 1997 թ. հեղեղումների պատճառած վնասը Հայաստանին կազմել է 10 մլրդ դրամից ավելի: Դա այն վնասն է, որը պատճառվել է շենքերին, ճանապարհներին, գեցային կառույցներին, ցանքատարածություններին, **չհաշված հողերի էրոզիայի ենթարկվելը**: Անհավանական է թվում, բայց կարելի է հեղեղումները եւ էրոզիան կանխել, այսինքն՝ տեղումներից առաջացած ջրերը պահել մեր հողերի վրա, թույլ չտալ, որ դրանք մակերեսային հոսքի ձեւով, էրոզիայի ենթարկելով գյուղատնտեսական հողերը, դուրս գան Հայաստանի սահմաններից: Հեղեղումները, էրոզիան կանխելու համար առաջարկվում է մի նոր, շատ պարզ ու հասարակ միջոց՝ հեղեղաբեր տարածքում կատարել ջրահավաք ակոսավորում:

Ի՞նչ է նշանակում ակոսավորում. մեկ հեկտարում փորվում է 1900 գծամետր ակոս՝ սկսած ջրբաժանի վերին սահմանից, հորիզոնական ուղղությամբ, իսկ ուղղաձիգ ուղղությամբ ակոսները փորվում են 5 մետրի վրա, այսինքն՝ վերեւի առաջին ակոսից մոտ 5 մետր ցածր փորվում է երկրորդ ակոսը, դրանից 5 մետր ցածր՝ երրորդ ակոսը, դրանից ներքեւ՝ չորրորդ ակոսը եւ այսպես շարունակ, մինչեւ ամբողջ տարածքը վերեւից ներքեւ պատվում է միջակոսային 5 մետրանոց շերտերով: Հորդառատ տեղումների ժամանակ միջակոսային շերտից հողի մեջ չներծծված ջուրն իջնում է ներքեւ, լցվում ակոսի մեջ, հետո էլ ակոսի միջով ներծծվում հողի մեջ, որի հետեւանքով փարթամ բուսականություն է աճում: Ակոսի չափերը, լայնությունը եւ **խորությունը ընդունվում են այնպես**, որ ամենահորդառատ տեղումներից առաջացած մակերեսային հոսքը տեղավորվի ակոսի մեջ: Ակոսի չափերը 25-30 սմ-ի վրա հաշվված են 60 մմ ժամ հորդառատ տեղումների համար, ինչպես եղավ 1946 թ. Երեւան քաղաքի հեղեղումների ժամանակ:

